**Հետաքրքիր է իմանալ**

## ՔԱՐԵՐ, ՈՐՈՆՑ ՀԱՆԴԵՊ ԺԱՄԱՆԱԿՆ ԱՆԶՈՐ Է

*Հայաստանի Հանրապետության տարածքի մեծ մասը ծածկված է արտաժայթուք ապարներով, օրինակ՝ բազմատեսակ տուֆեր (Արագած լեռ), բազալտներ (Գեղամա լեռներ): Ներժայթուքներն ավելի քիչ են տարածված (Արամազդ լեռ, Թեժ լեռ):*

*Բազալտները անհիշելի ժամանակներից օգտագործվել են Հայաստանում բնակավայրերի, եկեղեցիների կառուցման համար: Երևանի և հանրապետության մյուս քաղաքների շենքերի հիմքերն ու ստորին հարկերը, կառուցված են սրբատաշ և դրվագված բազալտաքարերով: Բազալտները Հայաստանում կիրառվում են նաև կամուրջների, ջրատեխնիկական կառույցներում:*

*Տուֆը միշտ հավերժության խորհրդանիշ է եղել: Տուֆակերտ տները համարվել են ամրության, հուսալիության, և գեղեցկության մարմնացում: Տուֆ քարի վրա են կերտում հայկական մշակույթի ամենաբնորոշ տարրը՝ խաչքարը:*